Ջերմանըման մաքուր սիրով,
Ռաբբիանման լուծանելով։
Սահանանըման յայտ բերելով,
Վարժողանման միշտ կրթելով,
Տեղեկանման հըմուտ գոլով
Ռետոռանման վարժես սիրով։
Յաւղանըման շնորհս տալով,
Իիւքանըման պատճառ գոլով,
Փըրկչին նըման երեւելով,
Քաջանման հրաման տալով։
— Քրիստոսի փառք
յաւիտեանս ամէն։

*Իր եղբօրորդին՝ Յակոբ քհ. կը վկայէ թէ Գրիգոր վրդ. Կեսարացի ունէր նաև «Ներբողեալ աղօթք հոգեխառս, մաղթողական ի Ս. Պատարագին, ի դէմս ամենասուրբ Երրորդութեանն եւ մի աստուածութեանն», որ դըժբախտաբար անծանօթ կը մնայ մեզի։*

*Գրիգոր Կեսարացի պատրիարք ունէր նաև «Քարոզգիրք», «Դատաստանագիրք» և «Կանոնգիրք» (Սրուանձտեանց, Թորոս Աղբար Ա. հտ. էջ 294), միայն շատ որոշ չէ թէ ի՞ր հեղինակութիւնն է թէ այլոց, սակայն շատ հաւանական է որ իրը եղած ըլլայ, մանաւանդ «Քարոզգիրք»ը։*

*Գրիգոր վրդ. Կեսարացի, որուն համար ըսուած է թէ արտաքին գիտութեանց*